ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

24.09.2024թ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածով Ձեզ ենք ներկայացնում «Բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետություն տեղափոխված Արցախի Հանրապետության ժողովրդի կենսագործունեության կազմակերպման պայմանների ուսումնասիրություն իրականացնող քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին» դիմումը:

Թուրքիայի ակտիվ աջակցությամբ և վարձկան ահաբեկչական կազմավորումների ներգրավմամբ Ադրբեջանը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ լայնամասշտաբ պատերազմ, որի ակտիվ փուլը թեև դադարեց 2020թ. նոյեմբերի 9-ին՝ զինադադարի հաստատմամբ, սակայն հետագա ընթացքը վերահաստատեց Արցախի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը: Տևական ժամանակ ահաբեկման մեջ պահելով Արցախի ժողովրդին, Ադրբեջանը 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ապօրինի արգելափակեց Արցախի Հանրապետությունը աշխարհին կապող միակ ուղին՝ Լաչինի միջանցքը՝ շրջափակելով Լեռնային Ղարաբաղը՝ ազգաբնակչությանը մատնելով հյուծման և սովի: 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը սանձազերծեց Լեռնային Ղարաբաղի դեմ նոր ռազմական հարձակում, որի հետևանքով Արցախն ամբողջությամբ հայաթափվեց՝ Արցախի Հանրապետության ժողովուրդը բռնի տեղահանվեց իր մշտական բնակության երկրից՝ հայտնվելով Հայաստանի Հանրապետության տարածքում: Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության հետևանքները ոչ միայն Արցախի Հանրապետության ամբոջությամբ և Հայաստանի Հանրապետության էական տարածքային կորուստներն են, հազարավոր մարդկային զոհերը, տասնյակներով բռնի անհետացած, գերեվարված և

պատանդառված անձինք, այլ նաև սեփական հայրենիքը թշնամու կողմից զավթված, նյութական և ոչ նյութական արժեքները կորցրած, Արցախի Ժողովրդի կյանքի կազմակերպման նոր մարտահրավերները:

Այս մարտահրավերների հաղթահարման կազմակերպումը նախևառաջ Հայաստանի Հանրապետության հանձնառությունն է, որն ուղղակիորեն բխում է Հայաստանի Հանրապետության, որպես Արցախի Հանրապետության ժողովրդի անվտանգության երաշխավորը լինելու հանգամանքից: Սակայն մինչև Արցախի ժողովրդի հավաքական իրավունքների վերականգնումն ու պատշաճ միջազգային երաշիքներով իրացումը, չափազանց կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում հարկադրաբար հայտնված Արցախի Հանրապետության ժողովրդի աժանապատիվ կենսապայմանների ստեղծումը:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ.

Քննիչ հանձնաժողովի քննության առարկան Արցախի Հանրապետության ժողովրդի արժանապատիվ կենսապայմանների ապահովման համար բռնի տեղահանված անձանց (ընտանիքների և անհատների) կարիքների բավարարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության և իրավասու այլ մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների անհամապատասխանությունների փաստերն են, որոնք վերաբերում են.

1. Արժանապատիվ կենսապայմանների (բնակություն, սոցիալական ինտեգրում, մատչելի կրթություն, առողջության պահպանում, արցախյան ավանդույթների, որպես հայ ժողովրդի ազգային կյանքի կարևորագույն արժեքի պահպանում, խրախուսում և այլն) ապահովմանն ուղղված կարիքների բացահայտմանը, գնահատանը և դրանց ուղղությամբ իրականացվող ծրագրերին:

2. Արցախի Հանրապետությունում հաշվառված անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում կարգավիճակի տրման համակարգի համարժեքությանը՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների իրացման՝ միջազգային իրավունքով և Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներին:

3. Արցախյան ծագմամբ պայմանավորված ներազգային թշնամանքի և ատելության մթնոլորտի պատճառների բացառման օրենսդրական կարգավորումների բացերին և/կամ իրավակիրառ պրակտիկայում առկա թերություններին:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆ Է՝

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ հանձնաժողովի գործունեության ոլորտին առնչվող

նորմատիվային և ոչ նորմատիվային ակտեր, հրամաններ, հրահանգներ, զեկուցագրեր, տեղեկանքներ, փաստաթղթեր և քննության առարկային վերաբերող անհրաժեշտ այլ տեղեկություններ:

2. Հանձնաժողովի նիստերին հրավիրել պաշտոնատար անձանց, պահանջել և ստանալ նրանցից գրավոր և բանավոր բացատրություններ նրանց գործողությունների, այդ թվում՝ գրավոր կամ բանավոր հայտարարությունների վերաբերյալ:

3. Կատարել այցեր, շահառուների, ինչպես նաև նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների, իրավապաշտպանների և շահագրգիռ այլ անձանց ու կազմակերպությունների (այդ թվում՝ հիմնախնդրով զբաղվող միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների) ներգրավմամբ կազմակերպել անհամապատասխանությունների, բացթողումների և թերությունների արձանագրում, քննարկում և հիմնախնդիրների լուծումների առաջարկների մշակում:

4. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով քննիչ հանձնաժողովին վերապահված այլ լիազորություններ:

Քննիչ հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Արթուր Խաչատրային:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ.

Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը սահմանել քննիչ հանձնաժողովի ստեղծման պահից սկսած 6 ամիս:

Կից ներկայացվում է «Բոնի տեղահանված և Հայաստանի Հանրապետություն տեղափոխված Արցախի Հանրապետության ժողովրդի կենսագործունեության կազմակերպման պայմանների ուսումնասիրություն իրականացնող քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին» Ազգային Ժողովի որոշման նախագիծը (նախագծի հիմնական զեկուցող Արծվիկ Մինասյան)՝ հաշվի առնելով նաև քննության ենթակա փաստերի և աշխատանքի կազմակերպման ծավալները:

«Բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետություն տեղափոխված Արցախի Հանրապետության ժողովրդի կենսագործունեության կազմակերպման պայմանների ուսումնասիրություն իրականացնող քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին» դիմումը ներկայացնող Ազգային ժողովի պատգամավորներ

h/h	Անուն, ազգանուն		ստորագրություն
1.	Աստղիկ Օհանյան	078	
2.	Հրաչիկ Հարությունյան	080	
3.	Մհեր Մուսինյան	086	
4.	Լիլիթան Ծատուրյան	088	
5.	Գեղամ Մանուկյան	083	
6.	Գուրգեն Դանիելյան	087	
7.	Գեղամ Հարությունյան	099	
8.	Դավիթ Հակոբյան	095	
9.	Արմենակ Կոստանդյան	093	
10.	Վահե Օհանջանյան	090	
11.	Լևոն Խաչատրյան	097	
12.	Գրիգորիսն Հարությունյան	082	
13.	Արզումանյան	081	
14.	Սոնա Թադևոսյան	085	
15.	Հասմիկ Խաչատուրյան	084	
16.	Արթուր Սարգսյան	096	
17.	Մարտին Մարգարյան	102	

18.	Սերգեյ Գրիգորյան	101	
19.	Հայկ Վարդանյան	105	
20.	Արմեն Գևորգյան	075	
21.	Սիրեն Կարապետ	107	
22.	Հերմոն Սարգսյան	079	
23.	Վահան Գրիգորյան	073	
24.	Վարուժան Կրպեյան	092	
25.	Բագրատ Հովսեփյան	099	
26.	Արարատ Զաքարյան	074	
27.	Գոռ Ստեփանյան	094	
28.	Դավիթ Գալստյան	076	
29.	Գեորգիս Արարատյան	100	
30.	Սուրեն Սրբազան	089	
31.	Գրիգոր Քալանթարյան	091	
32.	Սերգեյ Գրիգոր	103	
33.			
34.			
35.			

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Հիմք ընդունելով Սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասը և առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «Բոնի տեղահանված եվ Հայաստանի Հանրապետություն տեղափոխված Արցախի Հանրապետության ժողովրդի կենսագործունեության կազմակերպման պայմանների ուսումնասիրություն իրականացնող քննիչ հանձնաժողովի» անդամների թիվը սահմանել տասնյոթ: